

## Կարծիք

### Վիկտորիա Ալեքսանդրի Առաքելովայի

«Եզդիականությունը որպես մերձավորարևելյան ոչ-դոգմատիկ միջավայրի երևույթ» Թ. 00. 05 – «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկայացված հետազոտությունը նվիրված է բարդ և բազմաշերտ մի խնդրի, որը մեծ նշանակություն ունի ինչպես համեմատական կրոնագիտության, այնպես էլ Մերձավոր Արևելքի կրոնական լանդշաֆտի ուսումնասիրության համար: Եզդիականությունը, ինչպես արդարացիորեն ընդգծում է ատենախոսը, շարունակում է մնալ տարածաշրջանային ոչ-դոգմատիկ կրոնական միջավայրի ամենաքիչ ուսումնասիրված համակարգերից մեկը: Ժամանակակից պայմաններում, երբ հետաքրքրությունը էթնո-դավանական համայնքների և նրանց կրոնական առանձնահատկությունների նկատմամբ աճում է, նման երևույթների ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ գիտական նշանակություն: Սա հատկապես այժմեական է հենց եզդիականության ուսումնասիրության տեսանկյունից՝ որպես էթնո-դավանականության ամենահստակ, սակայն միաժամանակ ամենաանտեսված օրինակներից մեկը:

Հայ հումանիտար գիտության համար թեմայի արդիականությունը կարևորվում է նաև այն գործոնով, որ եզդիները Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնությունն են, ինչը փաստում է նաև ուսումնասիրության կիրառական բաղադրիչի առկայությունը:

Եզդիականությունը՝ իր դավանական վարդապետության յուրահատուկ բնույթի պատճառով, երկար ժամանակ դիտարկվել է որպես մեկուսացված հա-

մակարգ. այն ձևավորվել է փակ համայնքի շրջանակում և ներառում է մի շարք ոչ տիպական առանձնահատկություններ: Ատենախոսության հեղինակը, չժխտելով այս յուրահատկությունը և խորապես ծանոթ լինելով այս սինկրետիկ կրոնական ուսմունքի առանձնահատկություններին, դիտարկում է այն Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ միջավայրի համատեքստում, որտեղ մի շարք հոսանքների միջև ի հայտ են գալիս կայուն գուգահեռներ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս վերլուծել եզդիականությունը ոչ-դոգմատիկ դաշտի այլ բաղադրիչների տիպաբանական համատեքստում և հետևողականորեն բացահայտել գուգահեռները եզդիականության և այդ դաշտի երեք առանցքային տարրերի՝ սուֆիզմի, ծայրահեղ շիա դավանանքի և գնոստիցիզմի միջև, ինչը հեղինակը ձևակերպել է որպես հետազոտության նպատակ և խնդիր:

Աշխատանքն ունի հստակ կառուցվածք. այն բաղկացած է նախաբանից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և զրականության ցանկից: Նախաբանը ներառում է հետազոտության առարկայի սահմանումը և դրա արդիականության հիմնավորումը, աշխատանքի նպատակի և խնդիրների ձևակերպումը, գիտական նորույթի հիմնավորումը, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Այստեղ է ներկայացված նաև պատմագրության համառոտ քննությունը և մեթոդաբանական բազան:

Ներածությունը կենտրոնանում է ադավիական սուֆիական օրդենի ձևավորման պատմա-կրոնական համատեքստի վրա, որի հիման վրա հետագայում ձևավորվեց եզդիական համայնքը: Բացի դրանից, Ներածությունում հեղինակը տալիս է եզդիականության մի շարք բաղադրիչների ընդհանուր ակնարկ, ինչն անհրաժեշտ տարր է ատենախոսության թեմայի համատեքստում: Ատենախոսը խնդիր է դնում չսահմանափակվել գուգահեռների որոնումներով, այլ փորձել բացահայտել, թե ինչ կերպ են կրոնական փորձառության համընդհանուր տարածում ունեցող

կառուցվածքները իրագործվում, ձևափոխվում և վերաիմաստավորվում տարբեր մշակութային ենթատեքստերում:

Առաջին գլուխը՝ «Սուֆիական տարրերը եզդիականության մեջ», նվիրված է եզդիական ավանդույթում առկա սուֆիական տարրերի բացահայտմանը և վերլուծությանը: Ատենախոսի վերլուծությունների մեջ պետք է նշել հետևյալ կարևոր ուղղությունները.

- Սուֆիական կերպարների հարմարեցումը եզդիական ավանդույթում. Շեյխ Ադի բին Մուսաֆիրը՝ առաջին եզդիական համայնքի լեզենդար հիմնադիրն ու վաղ սուֆիականության կարևոր մյուս դեմքերը վերափոխվել են եզդիական աստվածությունների և սրբերի կերպարների: Ատենախոսի վերլուծությունը հիմնված է եզդիական կրոնական բնագրերի ուսումնասիրության վրա, այդ թվում՝ նշված անձանց նվիրված հիմների վրա, որոնք պարունակում են նաև նրանց վարքաբանության տարրեր:

- Շայթանի արդարացման սուֆիական հասկացության ազդեցությունը եզդիական դավանանքի առանցքային կերպարի՝ Մալակ-Թավուսի պաշտամունքի ձևավորման վրա, ինչպես նաև այս աստվածության ծագումնաբանության վերլուծությունը նշված հասկացության շրջանակում:

- Սուֆիական հասկացությունների իմաստաբանության վերափոխման վերլուծությունը եզդիական միջավայրում:

Բոլոր ներկայացված վերլուծական ուղղությունները ցույց են տալիս, թե ինչպես հենց վաղ սուֆիական միջավայրը դարձավ նոր սինկրետիկ դավանական համակարգի ձևավորման հիմքը:

Երկրորդ գլուխը՝ «Եզդիականությանը և ծայրահեղ շիականությունը», ներկայացնում է եզդիական դավանական ավանդույթի և ծայրահեղ շիական հոսանքների միջև զուգահեռների բացահայտումն ու վերլուծությունը: Այստեղ նախ և առաջ առանձնացվում են մի շարք բնորոշ հատկանիշներ, որոնք հեղինակը սահմանում է որպես «Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ միջավայրի ցու-

ցիչներ»։ Դրանք են՝ Սիրամարգ-Հրեշտակի (Մալակ-Թավուսի) պաշտամունքը, սև շան պաշտամունքը և վերամարմնավորման (ոեխնկառնացիայի) գաղափարը։ Բացի դրանից, ներկայացված են զուգահեռներ շիականության համար առանցքային կերպարների պաշտամունքի միջև, որոնք եզդիական ավանդույթում ստացել են առանձնահատուկ դավանական դերակատարություն՝ երբեմն սրբերի, իսկ երբեմն նույնիսկ աստվածությունների կարգավիճակով։

Վերջապես, հեղինակն առանձնացնում է մի շարք ընդհանուր հատկանիշներ, որոնցով նշանավորվել են Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ դաշտի գրեթե բոլոր խմբերը, այդ թվում՝ եզդիներն ու ծայրահեղ շիական հանրույթները։ Կարևոր նշանակություն ունի բոլոր հիշատակված զուգահեռների ծագումնաբանության բացահայտումը, ինչը և փայլուն իրականացնում է ատենախոսը։ Նա դրանք բացատրում է ոչ թե ծայրահեղ շիական դաշտի ազդեցությամբ եզդիականության վրա, այլ գնոստիկ հոսանքների ընդհանուր ազդեցությամբ ոչ-դոգմատիկ միջավայրի ձևավորման վրա։

Երրորդ գլուխը՝ «Եզդիականությունը և գնոստիկ դաշտը», մեր կարծիքով, ատենախոսության ամենակարևոր մասերից մեկն է։ Այստեղ հեղինակը վերլուծում է գնոստիկ տարրերը եզդիականության մեջ, մասնավորապես՝ միանձնյա աստծու՝ Խուադեի կերպարում, եզդիական սուրբ երրորդության գլխավոր կերպար Մալակ-Թավուսի, ինչպես նաև եզդիական պանթեոնի որոշ աստվածությունների (վերամարմնավորման պատասխանատու Շեյխ Կրասը և լուսնի աստվածությունը) կերպարներում։

Վերլուծության կարևոր հատվածը կարելի է համարել եզդիների ծագման լեզենդի ձևավորումը, որը կապ ունի աստվածաշնչային պարականոն ավանդույթի հետ, ինչպես նաև զուգահեռները կարևոր գնոստիկ տարրերի, օրինակ՝ օձի և մարգարիտի խորհրդանիշների միջև։

Առանձնահատուկ նորություն կարելի է համարել եզդիականության և նմանօրինակ գնոստիկ կրոնական՝ մանդեական և մանիքեական, համակարգերի միջև եղած զուգահեռների բացահայտումը:

Եզրակացությունում ատենախոսը ամփոփում է աշխատանքի հիմնական դրույթները և ներկայացնում հետևություններ՝ եզդիական ավանդույթում սուֆիական, ծայրահեղ շիական և գնոստիկ տարրերի գենեզիսի վերաբերյալ: Ատենախոսի եզրակացությունները թույլ են տալիս եզդիականությունը դիտարկել ոչ որպես մեկուսացված դավանական համակարգ, այլ որպես մետադավանական ավանդույթի ակտիվ բաղադրիչ, որը արտացոլված է նաև տարածաշրջանի ոչ-դոգմատիկ միջավայրի մի շարք այլ բաղադրամասերում:

Ատենախոսության գիտական նորույթը նախ և առաջ նրանում է, որ ատենախոսն առաջին անգամ փորձում է համակարգված վերլուծության ենթարկել եզդիականությունը որպես Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ դավանական դաշտի մաս՝ համադրելով նրա կառուցվածքային տարրերը սուֆիական, ծայրահեղ շիական և գնոստիկ ավանդույթների հետ: Ատենախոսությունում համոզիչ կերպով ցույց է տրված, որ եզդիական վարդապետության բազմաթիվ տարրեր՝ սկսած նշանակալի պատմական կերպարների սրբագործումից մինչև կոսմոգոնիկ խորհրդանիշներ, եզդիական պանթեոնի աստվածությունների առանձնահատկություններից մինչև չարի բնույթի ընկալման հատուկ ձևերը, ունեն գուգահեռներ վաղ սուֆիական գաղափարների, ծայրահեղ շիական հայացքների և գնոստիկ ուսմունքների հետ:

Ատենախոսը մասնագիտական բարձր մակարդակով վերլուծում է այս զուգահեռների գենեզիսը, հիմնավորապես ապացուցելով, որ էթե եզդիականության և սուֆիզմի դեպքում զուգահեռները արտացոլում են սուֆիական ժառանգությունը, ապա մյուս դեպքերում՝ ծայրահեղ շիական և գնոստիկ դաշտերի համատեքստում, զուգահեռները կարող են լինել բացառապես ոչ-դոգմատիկ միջավայրի ընդհանուր ցուցիչների արտահայտություն:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել հետազոտության նորարական ևս մեկ բաղադրիչ՝ «ոչ-դոզմատիկ կրոնական միջավայր» կատեգորիայի հիմնավորումը՝ որպես սինկրետիկ համակարգերի ձևավորման տարածք, որոնցում ի հայտ են գալիս զուգահեռ ցուցիչներ: Միաժամանակ «ոչ-դոզմատիկ կրոնական միջավայր» հասկացությունն ինքնին հանդես է գալիս որպես արդյունավետ հետազոտական առարկա: Այստեղ են կուզենայի մեկ դիտարկում անել նշված ձևակերպման շուրջ: Արդյո՞ք ատենախոսը բոլոր սինկրետիկ կրոնական ուղղությունների պարագայում օգտագործելի է համարում «ոչ-դոզմատիկ կրոնական միջավայր» ձևակերպումը: Կամ, քիչ այլ ձևակերպմամբ, բոլոր սինկրետիկ կրոնական ուղղությունների ձևավորման միջավայրը կարելի՞ է որակել որպես «ոչ-դոզմատիկ կրոնական միջավայր»: Եվ արդյո՞ք նման ձևակերպումը կիրառելի է, օրինակ, հետազոտման օբյեկտ հանդիսացող տարածաշրջանի հարևան մայրցամաքի՝ աֆրիկյան սինկրետիկ կրոնների ուսումնասիրության պարագայում: Եվ կամ այլ վայրերում տարածված հարյուրավոր սինկրետիկ կրոններին նվիրված հետազոտություններում:

Չի կարելի չանդրադառնալ ատենախոսական աշխատանքի նաև մեկ այլ կարևոր կողմին՝ ավանդույթների փոխանցման ուղիների հետազոտմանը: Աշխատությունում կատարված է կարևոր փորձ՝ վերակառուցել այն ուղիները, որոնց միջոցով տարբեր տարրեր կարող էին ներթափանցել եզդիականության մեջ: Ատենախոսը զգուշությամբ կապում է գնոստիկ մոտիվները մանդեական և մանիքեական ժառանգության հետ, մինևույն ժամանակ նշելով, որ այդ ավանդույթների ուղղակի ազդեցությունը եզդիականության վրա անհնարին է, ու բացատրում է դրանց հնարավոր ներկայությունը եզդիական դավանանքում՝ դրանց ձևավորմամբ ոչ-դոզմատիկ դաշտում, որտեղ նշված տարրերը կարող էին պահպանվել լուսանցքային հատվածներում, այդ թվում՝ ժողովրդական կրոնի մակարդակում:

Այդ մտեցմամբ ատենախոսը խուսափում է պարզեցումներից և ստեղծում է ավելի հավանական պատմական պատկեր: Նա համոզիչ կերպով բացահայտում է ավանդույթի սինկրետիկ վարդապետությունը, ինչը թույլ է տալիս հասկանալ, թե ինչու հենց ոչ-դոգմատիկ դաշտը դարձավ եզդիականության ձևավորման միջավայր:

Ատենախոսության արժանիքներից է նաև հետևողական միջգիտակարգային մտեցումը՝ հեղինակի կողմից բանասիրության, կրոնագիտության և ազգագրության տվյալների համադրությունը: Հատկապես կարևոր է, որ ատենախոսը չի սահմանափակվում միայն տեսական համադրություններով, այլ դրանք կապում է դաշտային դիտարկումների հետ:

Ատենախոսությունը հիմնված է աղբյուրների լայն համալիրի վրա, որը ներառում է՝ ակադեմիական հրատարակություններ, միջնադարյան պարսկական, արաբական և հայկական աղբյուրներ, սուֆիական և ծայրահեղ շիական կրոնական տեքստեր և եզդիական բնագրեր: Հատուկ ուշադրության է արժանի հեղինակի դաշտային նյութերի ծավալը և բազմազանությունը՝ թե՛ հրատարակված, թե՛ առաջին անգամ ներկայացված տվյալ ատենախոսությունում:

Ընդհանուր առմամբ՝ աղբյուրագիտական հենքի ծավալն ու բազմազանությունը, ինչպես նաև ներգրավված տվյալների բարձր քննադատական վերլուծության աստիճանը վկայում են ատենախոսի խորը կարողությունների և հետազոտվող ոլորտում մասնագիտական իմացության բարձր մակարդակի մասին: Մեթոդաբանական հիմքի համադրությունը ներառում է ֆենոմենոլոգիական վերլուծություն, կառուցվածքային համեմատականություն և կրոնական փորձի ուսումնասիրման ժամանակակից գիտական մտեցումներ:

Պետք է անդրադառնալ նաև հետազոտության տեսական նշանակությանը, ինչպես նաև դրա կիրառական բնույթին: Ատենախոսությունը կարևոր ներդրում է ոչ միայն եզդիական կրոնի ուսումնասիրման մեջ, այլ նաև ընդհանրապես՝ ոչ-դոգմատիկ դավանական համակարգերի ձևավորման մեխա-

նիզմների վերհանման ուղղությամբ: Ատենախոսը ներմուծում է հատուկ հասկացություններ, մասնավորապես՝ «Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ միջավայր», «ոչ-դոգմատիկ միջավայրի հատուկ ցուցիչներ», տալիս է դրանց հստակ սահմանումներն ու համոզիչ կերպով հիմնավորում դրանց համապատասխանությունը հետազոտության հարցադրմանը:

Վիկտորիա Առաքելովան առաջարկում է նաև համեմատական վերլուծության մոդել՝ ոչ-դոգմատիկ հոսանքների համատեքստում, ինչը կարող է ծառայել որպես Մերձավոր Արևելքի կրոնական քարտեզի ավելի ամբողջական պատկեր ստեղծելու համար արդյունավետ հետազոտական գործիքակազմ:

Ինչ վերաբերում է ատենախոսության կիրառական նշանակությանը, ապա դրա հիմնական դրույթներն ու արդյունքները կարող են օգտագործվել կրթական ծրագրերում, գիտական նախագծերում, ինչպես նաև՝ ինչը ոչ պակաս կարևոր է՝ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում և նոր եզդիական սփյուռքների ձևավորման տարածքներում միջկրոնական հարաբերությունների գնահատման փորձագիտական քննության համար: Ցանկացած հանրույթի էթնիկական կարևորագույն բաղադրիչների նկատմամբ ուշադրության ավելացումը միանշանակ բարձրացնում է այդ հանրույթի ինքնագնահատականը և, այդ տեսանկյունից, կարծում եմ, որ աշխատանքի կիրառական նշանակությունը (առաջին հայացքից՝ ոչ միանգամից տեսանելի) կարող է լինել եզդիական ինքնության ամրապնդումը: Միևնույն ժամանակ, կարծում եմ, ատենախոսությունը կարող է նաև նպաստել սոցիալական ցանցերում երբեմն հանդիպող եզդիական կրոնի ոչ ճիշտ, ոչ գիտական մեկնաբանությունների սահմանափակմանը:

Համառոտ նշենք մի քանի այլ նկատառումներ: Ատենախոսությունը, անկասկած, կշահեր գնոստիկ տարրերի սուֆիական միջավայրի միջոցով ներթափանցման մեխանիզմների ավելի մանրամասն վերլուծությամբ: Բացի դրանից, թեմայի հետագա ուսումնասիրության ընթացքում կարելի է վերլուծել եզդիա-

կանության ներկայիս վիճակը նույն Մերձավոր Արևելքի ոչ-դոգմատիկ միջավայրի համատեքստում, հաշվի առնելով տարածաշրջանի կրոնական դաշտի ժամանակակից փոփոխությունների դինամիկան: Այս նկատառումները մասնավոր բնույթ ունեն և, հասկանալի է, չեն ազդում աշխատանքի ընդհանուր գնահատականի վրա:

Եզրափակելով կարծիքը, պետք է նշել, որ Վիկտորիա Առաքելովայի ատենախոսությունը հիմնարար գիտական հետազոտություն է, որն ունի կարևոր տեսական և աղբյուրագիտական նշանակության: Աշխատությունը շարադրված է բարձր գիտական մակարդակով, տարբերվում է նյութի խորը ընկալմամբ և համոզիչ փաստարկներով: Ատենախոսությունը, մեր համոզմամբ, լիովին բավարարում է դոկտորական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, հետևաբար ես միջնորդում եմ ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետում գործող մասնագիտական խորհրդին շնորհելու Վիկտորիա Ալեքսանդրի Առաքելովային պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հրապարակային պաշտպանության ներկայացված «Եզդիականությունը որպես մերձավորարևելյան ոչ-դոգմատիկ միջավայրի երևույթ» ատենախոսության համար:

Պաշտոնական ընդդիմախոս



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գլխավոր գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր  
Հարություն Տիրանի Մարության

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մար-  
դարանության բաժնի գլխավոր գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Հարու-  
թյուն Տիրանի Մարությանի ստորագրությունը հաստատում էմ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
փոխտնօրեն գիտության գծով, բանասիրական գիտությունների  
թեկնածու Տորք Դալայան

8 հունվարի 2026 թ.

